



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՐԱՅ  
ԿՈՒՂԱՑՆՑՆՍԵՎԱՆ ՀԵՆՐԵՐԵՑՁԵԼԻ ԿՐԵԿԱՐԱՆ  
№ 25 (116)

---

631.56

S-84

Բ. ՏՈՇՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻ ՍԵՐՄՖՈՆԴԵՐ  
Յ Ե Վ  
ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՊԱԾԱՐՆԵՐ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 1

24 SEP 2010

631.56  
S-84

my

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

**ՎՈՐՈՇՈՒՄ**

**ՀՄԽԶ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմճանոցեր կազմակերպելու մասին.

1930 թ. Սեպտեմբերի 25-ին

Դժբախտ պատահարների, անբերրիության և սերմազրկության դեպքերում կուլեկտիվ ու անհատական տնտեսությունները սերմով ապահովելու նպատակով Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Ե. —

1008  
36540

1. Թույլ տալ կամավոր հիմունքներով կազմակերպել տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմ ֆոնդեր:

2. Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերը կազմակերպվում են կուլեկտիվ տնտեսությունների, պարզ արտադրական միությունների և հողային հասարակությունների ընդհանուր ժողովների վերջում: Ընդհանուր ժողովների ձայների պարզ մեծամասնությամբ ընդունված փորձումը պարտադիր և կոլտնտես-

Հրատ. № 1531

Գրարեպ. № 6204 (բ). Պատվեր № 955. Տիրաժ 7.000

Պետհրատի տպարան Յերևանում

սուբյուկներէ, արտադրական միութիւններէ և հողային հասարակութիւններէ բոլոր անդամներէ համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— Ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդեր կազմակերպելու մասին վարչութեամբ կայացնելու համար անհրաժեշտ է, վոր կոլտնտեսութեան, պարզ արտադրական միութեան և հողային հասարակութեան ընդհանուր ժողովներում ներկային տվալ միավորի մեծամասնութիւնը:

3. Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերը գտնվում են գյուղխորհուրդների ընդհանուր հսկողութեան տակ:

4. Պարզ արտադրական միութիւններն ու հողային հասարակութիւնները իրենց ընդհանուր ժողովներում ընտրում են պատասխանատու լիազորներ, վորոնց վրա պարտականութիւն է դրվում՝ ապահովել սերմֆոնդերը, ունենալ պահեստային գրքեր, կազմել փոխառուների ցուցակներ և հետեւել, վոր փոխառութիւնները ժամանակին մարեն:

Պատասխանատու լիազորները հաստատվում են գյուղխորհուրդների կողմից:

5. Պատասխանատու լիազորի պարտականութիւնները կոլտնտեսութիւններում ղրվում են վարչութեան անդամներից մեկի վրա:

6. Տեղական Ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդի չափը պետք է կազմի կոլտնտեսութեան կամ գյուղի սերմացվի պահանջի 50 տոկոսը, վորը գտնվելու յե հինգ տարվա ընթացքում:

7. Հողօգտագործները վարչութեամբ և յուրաքանչուր տարվա գտնվելիք սերմֆոնդի տոկոսը և տալիս է շրջործկոմիներին հոկտից թվեր առանձին մշակութիւնների մասին:

8. Կոլտնտեսութիւնների ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերի ամբարումը կատարվում է հանրայնացված գույքից և ամբողջովին գտնվում է նրանց իրավասութեան տակ:

9. Ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդն ըստ առանձին տնտեսութիւնների բաշխելու ժամանակ ղեկավարվել դասակարգային սկզբունքով, նկատի ունենալով տնտեսութիւնների ունակութիւնը. իսկ չքավոր տնտեսութիւնների համար սահմանել առավելագույն արտոնութիւններ, թուլատրելով նրանց առաջին յերկու տարվա ընթացքում մուծել իրենց փայի 1-2%:

10. Ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերի բաշխումն ըստ առանձին տնտեսութիւնների հաստատվում է գյուղխորհուրդների կողմից:

11. Ապահովագրական անձեռնմխելի սերմ-  
ֆոնդից խոխտափոթ թյունը տրվում է միայն ընդ-  
հանուր ժողովների վորոշմամբ բաց սռապես ցա-  
նելու համար և պետք է վերադարձվի փոխա-  
ռույի կողմից առաջիկա բերքից:

12. Կոլտնտեսութունների և արտադրական  
միությունների վարչություններն ու գյուղական  
խորհուրդները պարտավոր են համապատասխան  
պահեստներ տրամադրել սերմֆոնդեր պահելու  
համար:

13. Ապահովագրական անձեռնմխելի սերմ-  
ֆոնդերի կազմակերպման ընդհանուր ղեկավա-  
րությունը դրվում է շրջգործկոմիտեի և շրջկո-  
ոպմիությունների վրա:

14. Հանձնարարել Հողօրդկոմատին մշա-  
կել հատուկ հրահանգ սերմեր հավաքելու, պահ-  
պանելու, գյուղացիներին գյուղատնտեսական  
ոգնություն ցույց տալու, անձեռնմխելի սերմ-  
ֆոնդի սերմերի վորակը լավացնելու և սերմ-  
ֆոնդեր ոգտագործելու մասին:

15. Շրջգործկոմիտեի պարտավոր են հարկ  
յեղած դեպքերում, բայց վոչ պակաս քան տա-  
րին յերկու անգամ, ստուգել սերմֆոնդերի դը-  
րությունը:

Հողմարմիններին իրավունք է վերապահվում  
առնվազն տարին յերկու անգամ շրջգործկոմ-

ների միջոցով տեղեկություն պահանջել սերմ-  
ֆոնդի դրության մասին:

16. Ապահովագրական անձեռնմխելի սերմ  
ֆոնդերը, վորոնք կազմակերպվել են, պահպան-  
վում և ոգտագործվում են այս վորոշմամբ նա-  
խատեսված կարգով, յենթակա չեն զրավման:  
Սերմֆոնդի պաշարները չեն կարող ոգտագործ-  
վել պետական և հասարակական կազմակերպու-  
թյունների, նաև մասնավոր անձանց պարտքերը  
շիջուցելու, այլև շրջանային ու տեղական այլ  
կարիքները բավարարելու համար:

Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի  
նախագահ՝ [Redacted]

Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի  
գործերի կառավարիչ՝ Ի. ԿՆՐԱՊԵՏՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի  
քարտուղար՝ Ս. ԹԱՐԻՍՅԱՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՄԵՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հողային հասարակությունների, արտադրական միությունների յեվ կոյսնեստությունների սերմացուի պաշարները միասեղ պահելու մասին.

1930 թ. սեպտեմբերի 25-ին

Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Ե.—

1. Թուլլատրել հողային հասարակություններին, պարզ արտադրական միություններին և քաղաքացիներին խմբակցություններին իրենց սերմացուի պաշարները միատեղ պահել՝ հասարակ սերմացուն տեսակավոր սերմացույով փոխանակելու, սերմագտում կազմակերպելու, սերմացուն ախտահանելու, պահեստների վնասատուներին վոչնչացնելու, հացահատիկի փչացման ու կորուստների դեմ պայքարելու և այլ նպատակներով:

2. Սերմացուի պաշարները միատեղ պահելու գործը կազմակերպվում է կամավոր հիմունքներով. այդ պարտադիր է միայն այն անձանց, տնտեսությունների և հասարակությունների համար, վորոնք այդ մասին կամավոր վորոշում են ընդունել:

3. Հողային հասարակության, պարզ արտա-

դրական միություն անդամները, կամ քաղաքացիների խմբակցությունները, վորոնք ցանկություն են հայտնում իրենց սերմացվի պաշարները միատեղ պահել, այդ մասին վորոշում են կայացնում ընդհանուր ժողովում և իրենց միջից ընտրում են պատասխանատու լիազոր, վորին հաստատում է գյուղխորհուրդը:

4. Պատասխանատու լիազորի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա) կազմել հիշյալ գործին մասնակցող անձանց անվանացուցակները.

բ) Հսկել սերմացուի հավաքման գործնական աշխատանքների վրա.

գ) Ունենալ պահեստի հատուկ դրքեր, զբրանցելով նրանց մեջ յուրաքանչյուր անձին, տնտեսության և հասարակության կողմից պահեստին պահ տված սերմացվի քանակի, հացահատիկի տեսակի և վորակի մասին.

դ) Միջոցներ ձեռք առնել, վոր պահեստներում սերմացուն չփչանա, չգողանան և հրդեհից չվնասվի:

4. Պահ տված սերմացուները համարվում են տերերի սեփականություն. յուրաքանչյուր սերմնատեր ցանքի ժամանակ իր սերմացուն ոգտագործում է իր հայեցողությամբ:

5. Առաջարկել շրջանային հողբաժիններին,

ըրջկողտնամիություններին և ըրջկողտնամիություններին ցուցց տալ վերոհիշյալ կազմակերպություններին հետևյալ ոգնությունը.

ա) Աջակցել հարմար պահեստ գտնելու և նորոգելու գործում.

բ) Ցուցումներ տալ սերմացուն ամբարելու և միատեղ պահելու կարգի մասին.

գ) Աջակցել սերմագտիչներ, փոխանակելի տեսակավոր սերմացու, ախտահանման և այլ միջոցներ մատակարարելու գործում:

6. Սերմ-պաշարների կազմակերպման գործը կոլտնտեսությունների համար նույնպես կամավոր ե, սակայն կոլտնտեսությունների ընդհանուր ժողովում քննելուց և վորոշելուց հետո, դառնում ե պարտադիր յուրաքանչյուր կոլտնտեսականի համար:

7. Սերմացու ամբարելու մասին վորոշումը տարածվում ե նաև կոլտնտեսականի վրա, վորոնց աշնանացանը չեր հանրայնացված. այդ վորոշումը տարածվում ե նույնպես և այն անդամների վրա, վորոնք ընդունվել են հիշյալ վորոշումը կայացնելուց հետո. կոլտնտեսականների այդ յերկու խմբերի կողմից հանձնելիք սերմացուի նորման վորոշելիս, պետք ե նկատի ունենալ կոլտնտեսության անբսերի ընդարձակումը նախագծած ծրագրի համաձայն:

8. Այն սերմացուի արժեքը, վոր առանձին կոլտնտեսականը մտցնում ե կոլտնտեսության ֆնդի մեջ, գրանցվում ե նրա անձնական հաշվին, իրրև փայտվածար՝ կանսնադրությամբ նախատեսված կարգով:

9. Կոլտնտեսության սերմ-պաշարի ֆոնդն ընդունած ամբողջ սերմացուն պետք ե կոլտնտեսության կողմից մաքրվի — գտվի և պահվի չոր պահեստում: Կոլտնտեսության վարչությունը պարտավոր ե իր ուժերով և իր հաշվին պատրաստել, նորոգել և հարմարեցնել պահեստը սերմացու պահելու համար. այդ նպատակով նա ոգտագործում ե իր հարմար շենքերը, նաև այն շենքերը, վորոնք գրավել են կուլակային տնտեսություններից:

10. Սերմացու պահելու հիմնական կանոններն են՝

ա) Պահեստն ախտահանել, պատերը սպիտակացնել, ճեղքերը ծեփել և սվաղել:

բ) Թույլ չտալ, վոր պահեստում մի հացահատիկի սերմացուն մյուսի հետ խառնվի, հատկացնելով դրա համար հատուկ բաժանմունքներ:

գ) Պահեստների շուրջը առուններ շինել՝ պահեստները ջրից պաշտպանելու համար:

դ) պահեստ լցնել միայն զաված և մաքուր սերմացու:

ե) Պահեօտը խնամքով մաքրել:

զ) Պարբերաբար ստուգել սերմացվի դրութիւնը:

յե) Ունենալ պահեստի գիրք, վորի մէջ գրանցել սերմացուի մուտքն ու յելքը:

ը) Վոչնչացնել պահեստի ամեն անօսակ փնասատուններին:

11. Սերմացուն կանոնավոր կերպով ընդունելու, պահելու և անկորուստ պահպանելու ամար կոլտնտեսութեան վարչութիւնը ալդ գործը հանձնում է իր անդամներից մեկին, վորը և պատասխանատու չէ դրա համար:

12. Շրջանային հող բաժինները, շրջկոոպմիութիւնները պարտավոր են ցուցումներ տալ յուրաքանչյուր կոլտնտեսութեանը տարբեր սերմացուների պաշարները ամբարելու և միատեղ պահելու կարգի մասին:

Կոլտնտեսական կոոպերատիվ սիստեմը պարտավոր է միջոցներ ձեռք առնել սերմապաշարը անկորուստ պաշտպանելու համար:

13. Առաջարկել շրջկոոպմիութիւններին և շրջկոլտնտմիութիւններին մշակել հաշվետվութեան հատուկ և պարզ ձևեր, հետևել, վոր սերմերը կանոնավոր կերպով ամբարվեն և պարբերաբար ստուգել սերմապաշարը:

14. Շրջկոոպմիութիւններն ու շրջկոլտնտ-

միութիւնները սահմանում են սերմացու ամբարիլու ժամկետը, համաձայնեցնելով համապատասխան կոլտնտվարչութեան հետ: Այդ ժամկետը չի կարող լինել ավելի ուշ, քան ավլալ մշակույթի ապրանքային ավելցուկի հանձնումը:

15. Շրջկոոպմիութիւններն ու շրջկոլտնտմիութիւնները մշակում են սերմացու ամբարելու ծրագիրը, համաձայնեցնելով շրջանային հողբաժնի հետ. աշնանացանի և գարնանացանի ծրագիրը մշակելու հետ միաժամանակ հաշվի յեն առնում առանձին մշակույթների ցանքերն ընդարձակելու անհրաժեշտութիւնն այն չափով, ինչ չափով նախատեսած է Հողժողկոմատի ծրագրով:

16. Առաջարկել Հողժողկոմատին այս վորոշման հիման վրա հրատարակել համապատասխան հրահանգ:

- ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐՁՆԿՅԱՆ
- ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի կառավարիչ՝ Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
- ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քարտուղար՝ Ս. ԹՈՐԳՈՄՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻ  
ՍԵՐՄՖՈՆԴԵՐ

1. Ապահովագրական անձեռն խելի  
սերմճոնդի նպասակը

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վե-  
րակառուցման այս շրջանում, լերը հսկայական  
ջանքեր են թափվում գյուղատնտեսական պարզ  
ձեռնարկումների միջոցով բարձրացնել բերքա-  
տվութիւնը, չի կարելի մոռացութեան առ հիմ-  
նական ձեռնարկումներից մեկը՝ ախ ե տարրե-  
րային պատահարների դեպքում ապահովել մեր  
ցանքերի տարածութիւնները սերմացու յով, ա-  
պահովել իր ժամանակին, ապահովել նրան տե-  
սակաւոր սերմացու յով:

Ում չէ հայտնի, վոր գյուղացու ցանքսը  
շատ հաճախ յենթարկվում է դժբախտ պատա-  
հարներին: Նա (ցանքսը) վնասվում է կարկտից,  
յերալաից, գանազան վնասատուներից (մորեխ,  
մուկ) և շատ այլ տարրերային պատահարներից:  
Մեզ մոտ այնպիսի կարկուտներ են լինում,  
վոր իսպառ վոչնչացնում են գյուղացու ամբողջ  
ցանքսը: Գյուղացին շատ դեպքում կարկտահա-  
րութեան հետևանքով, վոչ միայն բերքից է

զրկվում, այլ և չի ստանում իր ցանած սերմն  
անգամ:

Այս 1930 թվին, ամառվա ընթացքում Լե-  
նինականի շրջանում մի քանի անգամ կարկուտ  
է յիկել: Սմեն անգամ էլ խոշոր վնասներ է  
տվել ցանքատերերին: Հուլիսի 22-ի կարկուտը  
միայն վնասել՝ մի շարք գյուղերի ցանքսեր՝

1 Գյուղքենդ գյուղում	100 % -ով
2 Հաջինագար	» 100 »
3 Դիրաքլար	» 80 »
4 Բաջողի	» 40 »
5 Դոնաղրան	» 40 »
6 Զաջուռ	» 40 »
7 Ղալթաղչի	» 40 »
8 Ոջաղուլի	» 30 »

Գիչ չեն կարկտահարված գյուղեր և այլ  
շրջաններում, քիչ չի և այնպիսի գյուղեր, վո-  
րոնց ցանքսերը վնասվում են յերաշտից, ցրտա-  
հարութիւններից, մկներէից, մորեխից և այլ  
վնասատուներից:

Սնա այս տարրերային պատահարներից, է  
վոր պեաք է ապահովել վնասված արերի տե-  
րերին սերմացու յով: Սնա այս նպատակի համար  
է հողորդանները, գյուղկոտպերացիայի կազմա-  
կերպութիւնները, գյուղացիների լայն մասսան  
գալիս են իրար փոխադարձ ոգնութեան, ստեղ-

ծելով գլուղի համար «Տեղական ապահովագրական անձեռնխելի սերմնոցեր»:

Այդ սերմնոցերը կոչվում են տեղական վորովհետև նրանք կուտակվում են տվյալ գլուղի համար և գործադրվում են այդ գլուղի կարիքների համար: Նա չի կարող ծառայել մի այլ գլուղի համար:

Այդ սերմնոցերը կոչվում են ապահովագրական վորովհետև նրանց նպատակն է ապահովել սերմացույով դանազան պատահարներից:

Այդ սերմնոցերը կոչվում են անձեռնխելի արև պատճառով, վոր նրանք բացի վերև հիշած նպատակներից չեն կարող գործադրվել այլ կարիքների համար, նրանք չեն կարող ծախսվել պարենավորման կարիքների համար, կամ ել տնասունների կերի պահանջները բավարարելու, ինչ բացառիկ դեպք էլ ստեղծված լինի նրանց համար:

Այդ սերմնոցերը չեն կարող ծախսվել անգամ գլուղհասարակության կամ նրա առանձին անդամների պարտքերը, հարկերը, տուրքերը և զանազան օրինական հատկացումներ հատուցանելու համար:

Տեղական ապահովագրական անձեռնխելի սերմնոցերը վերև հիշած նպատակների հետ միաժամանակ հետապնդում են մի այլ նպատակ,

վորը գուտ արտադրական նշանակություն ունի: Յերը գլուղը ունի ամբարած սերմնոց և կուտակված մի տեղ, ինքնին առաջ է գալիս մի ցանկություն ունենալ այդ ֆոնդը լավորակ սերմերից:

Մեր փորձնական և սելեկցիոն կաշմանները միջոցներ են ձեռք առնում տեղական վոչ տեսակավոր սերմերից ստանալ ավելի բերքատու և լավապուխ հատկություններով հարուստ նոր տեսակներ: Նրանք փորձեր են անում ստանալ նոր տեսակներ, բազմացնել նրանց ու տալ այս կամ այն շրջանի պայմաններին համապատասխան լավորակ տեսակներ:

Այսպիսի դեպքերում և, վոր գլուղի անձեռնխելի սերմնոցերը կարողանում են նրպատակ գլուղի վատ, զանազան տեսակի սերմերով խառը սերմացու փոխանակել լավորակ ու տեսակավոր միանման սերմացույով:

1008  
36540

2. Անձեռնխելի սերմնոցերի չափն ու կարգը:

Շատ շրջաններում ու գլուղերում լինի պարունակ են, վոր հարկավոր է սերմնոց ամբարել այն քանակությամբ, վոր կարելի լինի ապահովել գլուղի ամբողջ ցանքսի տարածությունը:

Միայն կլինեն, վոր այդպես հասկացվեն սերմ-  
ֆոնդերի կուտակումը:

Աննպատակ և կուտակել մի տեղ աչքան  
քանակութեամբ սերմ, յերբ նա ամբողջովին չի  
դործադրվելու, յերբ նրա մեկ մասը մնալու չե  
առանց շրջանառութեան: Տարրերային պատա-  
հարներից փաստում և դուրսի ցանքսի մի մասը:  
Հազվագուտ դեպքերում և, վոր ամբողջ ցանք-  
սը փաստում և:

Այդ պատճառով ել ժողովուրդի վորոշումը  
անձեռնմխելի սերմֆոնդ կազմելու մասին պար-  
տավորացնում և ապահովել դուրսի ցանքսերի  
50<sup>0</sup> -ը միայն, այսինքն, դուրսի ցանքսերի տա-  
րածութեան կեսը մշտապես ապահովված պետք  
և լինի անձեռնմխելի սերմֆոնդով:

Այս քանակը միանգամից կուտակելը դժվար  
և, դրա համար ել թուլյաարվում և ղեկընտով սերմ-  
ֆոնդի ամբողջ քանակը հավաքել 5 տարվա ըն-  
թացքում, սկսած 1930 թվի աշնանից:

Տուրաքանչյուր աշնան մինչև հոկտեմբերի  
15-ը նոր ստացված բերքից պետք և կուտակել  
մյուս տարվա սերմֆոնդի քանակը, Հոգժողկո-  
մատի առաջադրած կոնարով թվերի հիման վրա:

1930 թվին վորոշված և կուտակել սերմ-  
ֆոնդի ամբողջ քանակի 5 տոկոսը:

Ինչպես են վորոշում այդ 5 տոկոսը:

Ասենք. հինգ տարուց հետո, 1935 թվին, մի  
շրջան—որինակ Մարտունու շրջանը ունենալու  
չե 9.000 հեկտար գարնան ցորեն: Հինգ տարուց  
հետո այդ 9.000 հեկտար տարածութեան 50 տո-  
կոսը այսինքն կեար, 4.500 հեկտ. պետք և ա-  
պահովված լինի անձեռնմխելի սերմֆոնդով: Յե-  
թե հաշվելու լինենք, վոր յուրաքանչյուր հեկ-  
տարին ցանելու համար հարկավոր և 1,5 ցենտ-  
ներ ցորեն, մենք կստանանք, վոր հինգ տարվա-  
նթացքում Մարտունու շրջանը պետք և ամ-  
բարի 6.750 ցենտ. գարնան ցորեն:

Ըստ ղեկընտի 1930 թվի աշնան պետք  
և կուտակել այդ քանակի 5 տոկոսը միայն, վոր  
կանի 337,5 ցենտներ:

Ապահովագրական անձեռնմխել սերմ-  
ֆոնդերի կուտակումը կամավոր հիմունքներով  
և: Նրանք կազմվում են կոլտնտեսութեանների,  
պարզ արտադրական միութեանների ու հողա-  
սարակութեանների ընդհանուր ժողովի վորոշ-  
մամբ:

Սերմֆոնդի կամգելու վերաբերմամբ ընդ-  
հանուր ժողովի վորոշումը տվյալ կոլտնտեսու-  
թեան, պարզ արտադրական միութեան ու հո-  
ղային հասարակութեան բոլոր անդամների համար  
պարտադիր ուժ և ստանում միայն այն դեպ-  
քում, յերբ տվյալ կոլտնտեսութեան պարզ ար-

տաղրական միութեան ու հողհասարակութեան ընդհանուր ժողովին ներկա յեն անդամների կեսից ավելին և յերբ սերմացվի ֆոնդ կազմելու ստաշարիչը ընդունվում և ժողովին մասնակցողների ձայների պարզ մեծամասնութեամբ:

Յերբ հողային հասարակութեան ընդհանուր ժողովը վորոշում և հանում գյուղում կազմակերպել սպանովազրական անձեռնմխելի սերմֆոնդ, գյուղխորհրդին և մնում սերմֆոնդի ընդունած քանակը բաշխել հողային հասարակութեան անդամների, թե վոր անտեսութեան ինչ փայ պետք և մուծե անձեռնմխելի սերմֆոնդի մեջ:

Յուրաքանչյուր անտեսութեան մուծելու փայը վորոշելիս գյուղխորհուրդը պետք և դասակարգային մտտեցում ունենա: Նա (գյուղխորհուրդը) առաջին հերթին ծայրահեղ չբավորներին պետք և ազատե ֆոնդային մուծումներից, մյուս չբավոր անտեսութեանների համար սահմանի առավելագուցն արտեսութեաններ թույլ չափով, վոր այդ չբավոր անտեսութեանները առաջին 2 տարվա ընթացքում մուծեն իրենց փայի 1.20/0-ը: Այս հանգամանքը սակայն չե գրկում չբավոր անտեսութեաններին սերմֆոնդից ոգտվելու իրավունքից:

Անձեռնմխելի սերմֆոնդ կազմակերպելու

համար խոշոր նշանակութեան ունի, թե նա ինչ տեղ և պահվում և ինչ պայմաններում: Մեր գյուղերը գուրկ են շտեմարաններից և իրենց սերմացուն պահում են հորերում, վարտեղ հաճախ նա փչանում և:

Հարկավոր և վոր կոլանտեսութեանները, պարզ արտաղրական միութեանները, հողային հասարակութեանները մտածեն կառուցել իրենց շտեմարանները: Այդ շտեմարանները պետք և ախպես հարմարեցրված լինեն, վոր գանապան կուլտուրաների սերմեր իրար հետ չխառնվեն, նամանավանդ չերբ տեղական վոչ տեսակավոր սերմերը փոխանակված են տեսակավոր սերմացուրով:

Հողժողովմառի հրահանգը թույլատրում և այն գյուղերում, վորտեղ սերմֆոնդեր պահելու համար բացակայում են հարմար և համապատասխան շենքեր, սերմֆոնդ կազմակերպելու հարցը ժամանակավորապես հետաձգել, համաձայնեցնելով շրջանային գործադիր կոմիտեի հետ:

Այս չի նշանակում, վոր թույլատրվում և իսպառ մոռացութեան տայ, սերմֆոնդերը խոշոր գեր ունեն կառարելու ոգտութեան գալով չբավոր-միջակ անտեսութեաններին տարրերային պատահարների դեպքում, ինչու գյուղում շտեմարդրգոված պետք և լինի ինքնահարկման կարգով կանոնավոր և հարմար շտեմարաններ կառուցել:

### 3. Անձեռնմխելի սերմֆոնդերի ոգսագործանքի կարգը

Անձեռնմխելի սերմֆոնդերի սերմացուն վորպես փոխառութիւն տրվում է հողային հասարակութիւնների գյուղական ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Փոխառուների ցուցակը հաստատվում է գյուղխորհրդների կողմից, վորին և իրավունք է տրվում փոխառուների ցուցակի մեջ փոփոխութիւններ մտցնել:

Փոխառուները պարտավոր են փոխառութիւն կարգով ստացված սերմացուն տոկոսային հավելմամբ վոչ ավել տարեկան 3<sup>0</sup>/<sub>6</sub>-ից վերագարձնել առաջի բերքից, բայց վոչ ուշ հոկտեմբերի 15-ից:

### ՍԵՐՄԱՑՎԻ ՊԱՇԱՐՆԵՐ

#### 1. Սերմացվի պատարների նպատակը

Սերմպաշարը, վոր հաճախ ասվում է սերմֆոնդ, չպետք է շփոթել անձեռնմխելի սերմֆոնդի հետ: Անձեռնմխելի սերմֆոնդը ունի հատուկ նպատակ՝ ոգնութիւն զալ գյուղական անտեսութիւններին այն զեպքում, յերբ նրանց ցանքները վնասված են տարրերային վորեւ պատահարներից:

Սերմպաշարները արդեն կազմակերպվում են

այն նպատակով, վոր կոլտնտեսութիւնների, պարզ արտադրական միութիւնների և հողային հասարակութիւնների նաև քաղաքացիների առանձին խմբակցութիւնների անդամների սերմացուն ամբարվի միատեղ պահելու համար: Սերմացուն միատեղ ամբարելը ու պահելը վոչ միայն ավելի արժան է նստում, այլև այն հարմարութիւնները ու առավելութիւնը ունի, վոր այդ միջոցով կարելի յե հեշտ սերմացուն զտել, նրան արտահանել, պահեստի վնասատուների դեմ կովել, և վոր ամենագլխավորն է կարելի յե հեշտ վոչ տեսակավոր սերմացուն փոխանակել տեսակավոր սերմացուով:

Այստեղ է վոր յուրաքանչյուր գյուղ շահագրգռված է պահպանել իր տեղին հարմար տեսակները և այն չխառնել տեղական սերմերի հետ: Տեսակավոր սերմերը, խառնվելով վոչ տեսակավոր տեղական սերմի հետ, կորցնում է իր բերքատվութիւնը և այն բարձր հատկութիւնները, վոր նրանք ունեն տեղական սերմերի հանդեպ:

Շատ հեշտ է գյուղի վոչ տեսակավոր սերմացուն փոխանակել տեսակավորով, յերբ սերմացուն ամբարվում է միտեղ պահելու:

Սերմպաշարը ամբարում են նաև այն նպատակով, վոր կարելի լինի ապահովել զալիք ցանքար սերմացուով:

## 2. Սերմապաւարի կազմելու կարգը

Սերմապաւարները կազմվում են կամաւոր հիւանդներով: Կոլտնտեսութիւնները, վորոնք գյուղի սոցիալխատական սեկտորն են հանգիստում, վորոնք պետք է ընդհառաջեն գյուղատնտեսութեան գիտութեան ու տեխնիկայի վերջին խոսքին, նրանք առաջինը պետք է լինեն ձեռնարկելու սերմապաւարներ կազմակերպելու, սերմացուն միտեղ ամբարելու, ապահովելու գալիք ցանքսը սերմացույով:

Այս խի պատճառով սերմապաւարը պարտադիր է կոլտնտեսութեան յուրաքանչյուր անդամի համար, իբր կոլտնտեսութեան ընդհանուր ժողովը վորոշում է հանում, ունենալ սերմապաւար:

Այդպէս չէ պարզ արտադրական միութիւնների ու հողային հասարակութիւնների համար: Հողային հասարակութիւններում, պարզ արտադրական միութիւններում սերմապաւարը միտեղ ամբարելը պարտադիր է միայն այն անդամների համար, վորոնք ներկա լին լեղել ընդհանուր ժողովին և քվեարկել են հոգուտ սերմապաւար կազմելուն:

## Հ Ր Ա Յ Ա Ն Գ

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ 4-ԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1930 Թ.

Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմեղիների կազմելու, պահպանելու լիովն ոգսագործելու մասին

Համաձայն ՀՍԽՀ ժողովրդական Կոմխարների Սորերդի 1930 թ. սեպտեմբերի 25-ի վորոշման «Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմեղիներ կազմակերպելու մասին» («Սորերդային Հայաստան»-ի 1930 թ. սեպտեմբերի 30-ի № 229) ՀՍԽՀ Հողագործական ժողովրդական Կոմխարիւտը սորանով սանձանում է տեղական հասարակական ապահովագրական անձեռնմխելի սերմեղիներ կազմակերպելու, պահպանելու և ոգսագործելու հետևյալ կանոնները.

### Անձեռնմխելի սերմեղիների նպատակը

1. Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմեղիները կազմակերպվում են հետևյալ նպատակով սերմացու մատակարարելու կոլեկտիվ տնտեսութիւններին, դժբախտ պատահարների դեպքերում, այն է՝ կարկտահարութեան, յերաշտի, ցրտահարութեան, վատ բերքի ալ և

հրդեհների և տարրերային այլ պատահարների հետևանքով կոլլեկտիվ և անհատական անտեսությունների, պարզ արտադրական միությունների սերմացվի պաշարը վոչնչանալու դեպքում:

2. Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերն 1-ին կետում հիշված նպատակի հետ միաժամանակ հետապնդում են նաև գուտ արտադրական նպատակ, այն է՝ գյուղացիական վոչ տեսակավոր սերմացուն բարելավել, փոխանակելով անձեռնմխելի ֆոնդերի սերմացուն տեսակավոր ու բարելավված սերմերի հետ:

3. Անձեռնմխելի սերմֆոնդերը վոչ մի այլ նպատակի համար չեն կարող ծախսվել, բացի սույն հրահանգի 1-ին կետում հիշված նպատակի համար:

Մասնավորապես վճռական կերպով արգելվում է սերմֆոնդը ծախսել՝

ա) պարենավորման և անասունների կերի պահանջները բավարարելու համար,

բ) ինչպես կոլտնտեսության, նույնպես և հողային ամբողջ հասարակության կամ նրա առանձին անդամների պարտքերը, հարկերը, տուրքերը և զանազան տեսակի գանձումները հատուցանելու համար:

Անձեռնմխելի սերմֆոնդերի կազմելու կարգը

4. Տեղական անձեռնմխելի սերմֆոնդերը կազմվում են կոլտնտեսությունների, պարզ արտադրողական միությունների, հողային հասարակությունների անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Սերմֆոնդերն կազմելու վերաբերմամբ ընդհանուր ժողովի վորոշումը ավյալ կոլտնտեսության, պարզ արտադրողական միության, հողային հասարակության բոլոր անդամների համար պարտադիր ուժ է ստանում միայն այն դեպքում, ա) յերբ ավյալ կոլտնտեսության, պարզ արտադրողական միության և հողային հասարակության ընդհանուր ժողովին ներկա լեն անդամների կեսից ավելին, բ) յերբ սերմացվի ֆոնդ կազմելու առաջարկը ընդունվում է ժողովին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. Այն գյուղերում, վորտեղ սերմֆոնդեր պահելու համար բացակայում են հարմար և համապատասխան շենքեր, գյուղխորհրդներին իրավունք է վերապահվում սերմֆոնդ կազմակերպելու հարցը հասարակական ընդհանուր

ժողովի քննութեան չգնել, կամ ժամանակավորապես հետաձգել. համաձայնեցնելով այդ շրջափոխումի հետ:

5. Շրջանների սահմաններում անձեռնմխելի սերմֆոնդ կազմելու, զրա չափերի կոնտրոլ թվերը և գանձման ժամկետները արվում է Հող-ժողկրմատի կողմից:

6. Անձեռնմխելի սերմֆոնդեր կազմվում են այն կուլտուրաներից, վորոնք ավյալ շրջանի համար առավելագույն կարևորութուն ունեն գյուղատնտեսական տեսակետից:

7. Տեղական անձեռնմխելի սերմֆոնդեր կազմում են նատուրայով.

ա) հողային հասարակութուններում և արտադրական միութուններում սերմֆոնդ կազմող հողային հասարակութեան յուրաքանչյուր անդամի անտեսութեան բերքի վորոշ մասհանումից.

բ) հատկապես սերմֆոնդ կազմելուն հատկացված հողամասերի բերքից.

գ) կոլտնտեսութուններում հանրայնացված հողամասերի ստացած բերքից վորոշ մասհանումից:

8. Սերմֆոնդեր կազմելու այն չափերն ու ժամկետները, վոր վորոշված են ավյալ հողային հասարակութեան համար կոնտրոլ առաջա-

դրանքով, պետք է հողային հասարակութեան մեջ մտնող առանձին տնտեսութունների վրա բաժանվի, նկատի առնելով վերջիններիս տնտեսական վիճակը, ըստ վորում չքավորական ուղտեսութունների համար սահմանել առավելագույն արտոնութուններ, թույլատրելով նրան առաջին յերկու տարվա ընթացքում մուծել իրենց փայի 1% -ից — 2% -ը, կամ միանգամայն ազատել ծայրահեղ չքավորներին սերմֆոնդային մուծումներից, վորպիսի հանգամանքը, սակայն չի զրկում նրանց սերմվարկ ստանալու իրավունքից:

9. Սերմֆոնդի տարեկան փայական վճարումները յուրաքանչյուր տնտեսութուն պետք է մուծի բերքը հավաքելուց հետո, համենայն դեպս վոշ ուշ, քան նույն տարվա հոկտ. 15-ը:

10. Գյուղական ընդհանուր ժողովների այն վորոշումները, վորոնք վերաբերվում են սերմֆոնդեր կազմակերպելու — պահպանելու և օգտագործելու կարգին, նույնպես և փայական մուծումներն ըստ տնտեսութունների բաշխելու և մուծելու ժամկետների կարգը պետք է հաստատվեն գյուղական խորհուրդների կողմից:

11. Տեղական ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդի չափը պետք է կազմի ավյալ կոլտնտեսութեան, պարզ արտադրողական միու-

թիւն կամ հողային հասարակութեան ցանքսերի սերմացվի պահանջի 50 %-ը: Այս քանակութիւնը պետք է գանձվի 5 տարվա ընթացքում, ըստփորում 1931 թվականի սերմֆոնդի համար պետք է գանձել 5 %-ը 1930 թ. բերքից:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** — Յուրաքանչյուր տարվա կուտակվելիք սերմֆոնդը պիտի գանձվի նախորդ տարվա բերքից:

**Անձեռնմխելի սերմֆոնդերի պահպանման ու կառավարման կարգը**

12. Անձեռնմխելի սերմֆոնդերը գտնվում են կոլտնտեսութիւններում ու պարզ արտադրողական միութիւններում նրանց վարչութիւն, իսկ հողային հասարակութիւններում գյուղական խորհրդների կառավարման ներքո ըստփորում վարչութիւնների և գյուղխորհուրդների վրա յեն զրվում նաև սերմֆոնդերի կազմակերպելու ու զրանց պահպանման ու ոգտագործման հսկելու ընդհանուր ղեկավարութիւնը:

Սերմֆոնդը ստեղծելու, պահպանելու ու ոգտագործելու կազմակերպչական ուղիբատիվ աշխատանքի ընթացքում կոլտնտեսութիւնն ու պարզ արտադրողական վարչութիւնները և

գյուղխորհուրդները ղեկավարվում են Ժողկոմխորհի 1930 թ. սեպտեմբերի 25-ի վորոշմամբ, այս հրահանգով, նույնպես և շրջանային հողորգանների ուղեբատիվ կարգադրութիւններով ու նրանց կողմից սերմֆոնդի վերաբերմամբ հրատարակված հրահանգներով:

13. Անձեռնմխելի սերմֆոնդերի կազմակերպման, պահպանման, ոգտագործման հետ կապված ուղեբացիաները անմիջականորեն վարելու համար տվյալ հողային հասարակութեան ընդհանուր Ժողովը ընտրում է մի պատասխանատու անձնավորութիւն: Ընտրութիւնը պետք է հաստատվի գյուղխորհրդի կողմից:

14. Կոլեկտիվ տնտեսութիւններում և արտադրողական միութիւններում կետ 13-ում հիշված պարտականութիւնները զրվում է վարչութեան անդամների վորևէ մեկի վրա:

15. Սերմֆոնդի գործերը վարելու համար լիագործված անձնավորութիւնը կարող է վարձատրութիւն ստանալ, վորի չափը ինչպես նաև զրա համար անհրաժեշտ աղբյուրներն ինքը հասարակութիւնն է վորոշում:

16. Անձեռնմխելի սերմֆոնդերն պահպանելու համար առաջին հերթին ոգտագործվում են կոլտնտեսութիւնների գյուղխորհուրդների ու հողային հասարակութիւնների տրամադրու-

թիան տակ գտնվող առանձնացված հացահատիկային շտեմարանները, վորոնք բավարարում են սերմացուն կանոնավոր պահպանելու պահանջներին: Յեթե այդպիսի շտեմարաններ չկան, այդ դեպքում կարելի յե վարձակալութիան սկզբբունքներով ոգտագործել հացամթերողների կռուպերատիվ կազմակերպութիւնների շտեմարանները և այլոց շինքերը:

17. Հին շտեմարանները նորոգելուց, նոր շտեմարաններ կառուցելու ծախքերը նաև սերմֆոնդը պահելու համար բացված շինքերի վճարն անհրաժեշտ դեպքում պետք է ծածկվեն ինքնահարկման կարգով:

18. Հոդային հասարակութիւնը պարտավոր է սերմֆոնդի հասարակական պահեստները հրդեհից և այլ պատահարներից պահպանելու համար պատշաճ հսկողութիւն կազմակերպելու, ինչպես պահակներ վարձելու, նույնպես հասարակական պահակ սահմանելու:

19. Անձեռնմխելի ֆոնդի սերմացուի պաշարը, շտեմարանը և նրա սարքավորումը կոյտնտեսութիւններում— պարզ արտադրողական միութիւններում օւ հողային հասարակութիւններում պետք է պարտադիր կերպով ապահովագրվեն հրդեհից:

20. Պահեստում պահվող սերմացուի ծլուսակութիւնը պիտի վորոշել ամեն տարի: Այդ պարտականութիւնը կատարելու նաև սերմֆոն-

դերն կոնտրոլի յենթարկելու և նրանց ոգտագործման վրա հսկելու համար գյուղխորհուրդներին կից կազմում են հատուկ հանձնաժողովներ, իսկ կոյտնտեսութիւններում ու պարզարտադրողական միութիւններում այդ պարտականութիւնները ղրվում են վարչութիւններին վրա: Հանձնաժողովները և վարչութիւնները պետք է շրջանային ագրոնոմից հրահանգներ ստանան սերմացվի վորակը վորոշելու համար:

21. Կոյտնտեսութիւնները պարզարտադրողական միութիւնների վարչութիւններն ու գյուղխորհուրդները բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնում, վոր հավաքած սերմֆոնդերը փոխանակվեն նույն կուլտուրայի տեղական և ակկիմատիզացիայի յենթարկված տեսակավոր սերմերի հետ:

22. Յեթե անձեռնմխելի սերմ ֆոնդի մեջ կան տեսակավոր սերմացուներ, այդ դեպքում հողորգանները կոյտնտեսութիւն արտադրողական միութիւն վարչութիւնները, գյուղխորհուրդներն ու գյուղական հասարակութիւնները պարտավոր են՝

ա) Միջոցներ ձեռք առնել, վոր տվյալ կուլտուրայի տեսակավոր ցանքերի համատարած մասսիվներ ստեղծել:

բ) Հետևել, վոր փոխառուները վերագործնեն արև տեսակի սերմեր, ինչ տեսակի տրված է յեղել նրանց, վորոքես փոխատվութիւն:

գ) Սերմֆոնցի տեսակավոր մասը նորոգել, յերբ նա կկորցնի իր տեսակավորութիւնը:

դ) Հսկել, վո՞ւ սերմերի տեսակավոր պաշարներն կանոնավոր ոգտագործվեն և ինամքով պահվեն:

23. Շրջանային գործադիր կոմիտեները հարկ չեղած դեպքում, բայց տարեկան 2 անգամից վոչ պակաս, պիտք է անձեռնմխելի սերմֆոնդերի վիճակը հետազոտեն:

24. Կոլտնտեսութիւնների պարզ-արտագրողական միութիւնները և գյուղխորհուրդները պարտավոր են առնվազն տարեկան յերկու անգամ անդիկութիւններ փալ հողային մարմիններին, իսկ վերջինները Հողժողկոմատի սերմֆոնդերի ղրութիւն մասին:

Ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդերի ոգտագործման կարգը

25. Կազմված սերմֆոնդերը գյուղական ընդհանուր ժողովի վորոշմամբ վորպես փոխառութիւն արվում է հողային հասարակութիւն անդամներին, այս հրահանգի 1-ին կետում մատնանշված դեպքերում:

26. Փոխառութիւն կարգով ստացված սերմացուն փոխառուները պետք է  $\frac{0}{100}$ -այլին հավելմամբ ամբողջովին վերադարձնեն 1-ին բերքից, բայց վոչ ուշ, քան նույն տարվա հոկտեմբերի 15-ից:

ԾԱՆՈԹ. 1.— Սերմացվի փոխառութիւնների  $\frac{0}{100}$ -այլին հավելումների չափը վորոշում է տվյալ հողային հասարակութիւն անդամների ընդհանուր ժողով, սակայն այդ հավելումը տալեկան  $\frac{3}{100}$ -ից չպիտի գերազանցի:

ԾԱՆՈԹ. 2.— Սերմացվի փոխառութիւնից ստացված  $\frac{0}{100}$ -ները գործադրվում են սերմֆոնդը պահպանելու հետ կապված ոպերացիոն ծախքերը ծածկելու համար:

ԾԱՆՈԹ. 3.— Բացառիկ դեպքերում (բերքի լրիվ վոշնչացում, կամ հավաքած պաշարի վոշնչացում) փոխառուն կարող է միջնորդել գյուղխորհրդի առաջ հետաձգելու փոխառութիւն մուծումը և տոկոսների վրձարումը մինչև հետևյալ բերքը:

27. Փոխառութիւնները բաց են թողնվում փոխառուների ցուցակով գյուղխորհրդների կողմից հատառվելուց հետո: Գյուղխորհրդներին իրավունք է վերապահվում փոխառուների ցուցակի մեջ փոփոխութիւններ մտցնելու:

28. Սերմֆոնցի փայտվճարը նույնպես և վերցրած փոխառութիւնը ու դրա տոկոսը սահմանված ժամկետին չմուծողներից գանձվում են գյուղխորհրդների կողմից հարկերի գանձման համար նախատեսված կարգով:

Հողժողկոմի տեղակալ՝ Վ. Մամիկոնյան  
Սերմնաբուծ տեսուչ՝ Տոբյան

## Հ Ի Ա Վ Ա Ն Գ

ՀՍԽՀ Հաղժողկումաթի 16 հունվարի 1931 թ.

ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1930 թ. սեպտեմբերի 25-ի վորոշմամբ թուլ-լատրվում է կոլեկտիվ տնտեսություններին, գյուղ-արտադրական միություններին և հողհա-սարակություններին կամավոր հիմունքներով սերմացվի պաշարները միատեղ պահելու:

Կոլեկտիվ տնտեսություններում, գյուղար-տադրական միություններում և հողհասարակու-թյուններում սերմացվի պաշարներ կազմակեր-պելու և միատեղ պահելու նպատակն է ծրագրը-վող ցանքերը ապահովել անհրաժեշտ սերմացուով կազմակերպել սերմերի լրիվ գտումը, ախտա-հանումը, հարկ չեղած ղեպքում հասարակ և ան-վորակ սերմեր փոխանակելով տեսակավոր սեր-մով, ապահովել սերմացվի զանազան վնասատու-ների փչացումից և վտանգներից:

Հիշված սերմապաշարները չպետք է շփոթել ապահովագրական անձեռնմխելի սերմֆոնդի հետ, վորի կազմակերպման նպատակն է տարրերային պատահարների հետևանքով (կարկուտ, չերաշտ, ցրտահարություն և այլն) սերմացվի պաշարը վոչնչանալու ղեպքում ոգնություն տալ վնաս-ված տնտեսություններին:

Սերմապաշարները կազմվում են այն կուլ-

տուրաներից, վորոնք տվյալ շրջանի համար ա-ռավելագույն կարևորություն ունեն գյուղատըն-տեսություն տեսակետից:

## Սերմապաշարների կազմելու կարգը կոլեկտի-սուքյուններում

1. Կոլտնտեսություններում սերմապաշարներ կազմակերպելու համար վորոշում է կայաց-նում ընդհանուր ժողովը և վորոշումը կոլտնտե-սության բոլոր անդամների համար պարտադիր է. Սերմապաշար ամբարելու և պահելու մասին կայացրած վորոշումը տարածվում է նաև կու-տնտեսականների վրա, վորոնց աշխանացանը չի համայնացրված: Այդ վորոշումը տարածվում է նույնպես կոլտնտեսության այն նոր անդամների վրա, վորոնք կոլտնտեսություն են մտել հիշյալ վո-րոշումը կայացնելուց հետո:

2. Կոլտնտեսություններում սերմապաշար ամ-բարելու և պահելու մասին վորոշում հանելիս, ինչպես հանձնվելիք սերմացվի նորման վորոշե-լիս պիտի նկատի ունենալ ցանքերի ընդարձակ-ման ծրագիրը նաև նոր անդամներ ընդունելու հանգամանքը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի մտցրած սերմացվի արժեքը գրանցվում է հանձնողի անձ-

նական հաշվին իբրև փայտալճար կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. Շրջանների սահմաններում կոլտնտեսությունների համար սերմաչաշար կազմելու կոնտրոլ թվերը տալիս և կոլտնտեսությունը: Համաձայն ԽՍՀՄ-ի Հողօրհկոմատի վորոշման կոլտնտեսությունների համար սերմացուի պաշարը պետք է ամբարվի ծրագրված 75 տոկոսը մինչև 1931 թ. հունվարի 15-ը, մնացածը մինչև 1931 թ. մայիսի 1-ը:

4. Ամբարած սերմաչաշարը գտնվում է կոլտնտեսության վարչության հսկողության և դեկավարման ներքո: Կոլտնտեսության վարչությունը սերմացվի պահպանման և նրա հետ կապված օպերացիոն աշխատանքների ընթացքում դեկավարվելու չե ժողկոմխորհի 1930 թ. սեպտեմբերի 25-ի վորոշումով և սույն հրահանգով:

5. Կոլտնտեսության վարչությունը պարտավոր է իր ուժերով և իր հաշվին պատրաստել, նորոգել և հարմարեցնել համապատասխան պահեստ հավաքած սերմացուն պահելու համար, վորի համար նա օգտագործում է իր հարմար շենքերը նաև այն շենքերը, վորոնք զբաղվել են կուլակալին տնտեսություններից: Վարչությունը հետևում է, վորպեսզի ժամանակին զտվի ու ախտահանվի սերմացուն, վատորակ սերմացուն

փոխանակի տեսակավորով և ընհանրապես միջոցներ ձեռք առնի հավաքած սերմաչաշարի կանոնավոր և անվտանգ պահպանման համար:

6. Կոլտնտեսություններում սերմաչաշարը ընդունելու, պահելու և անկորուստ պահպանելու գործը կոլտնտեսության վարչությունը հանձնում է իր անդամներից մեկին, վոր և պատասխանատու լի դրա համար:

Սերմաչաշարների կազմելու կարգը գյուղատեսակական միություններում չեվ հողատեսակային միություններում

1. Համաձայն ժողկոմխորհի 1930 թ. սեպտեմբերի 25-ի վորոշման գյուղատնտեսական միությունները, հողատեսակությունները կամ քաղաքացիների խմբակցությունները կամավոր կերպով կարող են սերմացվի պաշարները միատեղ հավաքել և պահել, վորի համար վորոշում են կայացնում ընդհանուր ժողովում:

ԾԱՆՈԹ. 1.— Գյուղատնտեսական միությունների և հողատեսակությունների համար կոնտրոլ թվեր չեն արվում:

2.— Հողալին հասարակության ու պարզ արտադրական միության լիազորը հաշվի չե առնում գանձված սերմացվի պաշարի քա-

հասկը, հայտնում է հողբաժնին, իսկ վերջինը Հողօգոգկոմատին:

2. Գյուղարտադրական միությունների, հողհասարակութայն և առանձին խմբակցությունների միատեղ հավաքած սերմացուն համարվում է տերերի սեփականություն, յուրաքանչյուր սերմ հանձնող ցանքի ժամանակ իր սերմացուն լետ է ստանում և սգտագործում իր հայեցողությամբ:

3. Յերբ արդեն վորոշված է հողհասարակություններում ունենալու սերմաչաշար, ապա այդպիսիների հավաքումը համաձայն Համամիութենական Հողօգոգկոմատի պետք է ավարտվի մինչև 1931 թ. հունվարի 15-ը:

4. Հավաքված սերմաչաշարը գտնվում է հողային հասարակություններում և գյուղխորհրդի, իսկ գյուղարտադրական միություններում նրանց վարչութայն հսկողութայն և ղեկավարման ներքո:

5. Շրջանային հողբաժինները պարտավոր են տալ համապատասխան ցուցմունքներ վերոհիշյալ կազմակերպությունների սերմաչաշար ամբարելու և միատեղ պահելու մասին: Շրջանային միությունները իրենց հերթին պարտավոր են ամեն կերպ աջակցելու գյուղարտադրական ընկերությունների համար գտնել համապատասխան պահեստներ կամ հարմար շենքեր, վերա-

նորոգել այդպիսիք, արամադրել տնհրածեղտ նյութեր և գործիքներ սերմերի զտման և արտահանման համար, տեղական վոչ տեսակավոր սերմացուն տեսակավորով փոխանակել և ալլն:

6. Գյուղարտադրական միությունները և հողհասարակությունները սերմաչաշար հավաքելու վորոշման հետ միաժամանակ, ընդհանուր ժողովում ընտրում են պատաստանատու լիազար, վորի վրա դրվում են հետևյալ պարտակասությունները.

ա) կազմել սերմաչաշարի մատակցող անձանց անվանացուցակը:

բ) Հսկել սերմացուի հավաքման գործնական աշխատանքների վրա:

գ) Ունենալ պահեստի հատուկ գրքեր, գրանցելով նրանց մեջ յուրաքանչյուր տնձնավորութայն պահ տված սերմացուի քանակի, տեսակի և վորակի մասին:

դ) Միջոցներ ձեռք առնել, վոր պահեստում սերմացուն չփչանա, չգողացվի և պաշտպանված լինի հրդեհից և ալլն:

ե) Պարբերաբար ստուգել սերմացվի դրությունը,

Սերմաչաշարը, պահեստը և նրա սարքավորումը կոլտնտեսություններում, գյուղարտադրական ընկերություններում և հողային հասարա-

կուսիւններում պետք է պարտադիր կերպով  
ապահովագրվեն հրդեհից:

Շրջանային գործկոմները հարկ լեղած դեպ-  
քում, բայց տարեկան լերկու անգամից վոչ պա-  
կաս պետք է սերմպաշարի վիճակը հետազոտեն:

Կոլտնտեսուկուսիւնների, գյուղատնտեսական  
միութիւնների վարչութիւնները և գյուղխոր-  
հուրդները պարտավոր են պարբերաբար տեղե-  
կութիւններ տալ (առնվազն տարեկան լերկու  
անգամ) Հողբաժնին, իսկ վերջինները Հողժող-  
կոմատին սերմպաշարների գրուկի մասին:  
Բացի այդ յուրաքանչյուր 10 որը մեկ անգամ  
հաղորդում են հավաքված սերմպաշարի քանա-  
կի մասին համաձայն հատուկ ձևերի:

Հողժողկոմ՝ Ա. ԳՈՒԼՈՅԱՆ  
Յերկրվարչպետ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

1. Պատճնական վորուում Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմ- խորհի.— Տեղական ապահովագրական անձնու- մխելք սերմֆոնդեր կազմակերպելու մասին 1930 թ. սեպտեմբերի 25-ին . . . . .	2
2. Պատճնական վորուում Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմ- խորհի.— Հողային հասարակութիւնների, արտա- գրական միութիւնների և կոլտնտեսութիւնների սերմացուլի պաշարները միատեղ պահելու հա- մար. 1930 թ. սեպ. 25-ին . . . . .	8
3. Թ. Տոբյան.— Տեղական ապահովագրական անձնումխելի սերմֆոնդեր . . . . .	14
4. Հրահանգ Հ. Ս. Խ. Հ. Հողժողկոմատի.— Տե- ղական ապահովագրական անձնումխելի սերմ- ֆոնդերի կազմելու, պահպանելու և ոգտագործելու մասին . . . . .	36



17.112

17.112